Միւռոնին, զտաւ յԵրուսաղէմ հաստատեալ 'ի վերայ Եղիազարու. սակայն հրամայեաց Արքայ վարել ըստ նախնի սովորութեան, զի Եղիազար խաբէյութեամբ և հակառակ սահմանի նախնեաց իմոց ասէ առեալ է զհրովարտակն։ Սահմանեցաւ՝ զի յէջմիածնէ բաժանեսցի Միւռոնն և Եղիազար մի' խառնեսցի 'ի գործ Կաթուղիկոսութեան, բարձաւ նաեւ 15,000 փողն, զոր խոստացաւ հատուցանել Եղիազար. 'ի \ Շապան ամոյ, \•VV (1666)։ Եւ Յակոբ Կաթուղիկոս յետ կատարելոյ զայս ամենայն և վճարելոյ զվարսան՝ դարձաւ 'ի տեղի իւր յէջմիածին։

Իսկ Եղիազար Կաթուղիկոս յետ հասանելոյ յԵրուսաղէմ, ոչ ինչ գիտելով զգործոց Յակոբայ Կաթուղիկոսի, 'ի ուրուն Աստուածայայտնութեանն օրհնեաց Միւռոն 'ի պողոց ծառոյ ձիթենւոյ յոր կապեցաւ Տէրն մեր, 'ի վանս Մ. Հրեշտակապետի, որպէս գրէ նա ինքն 'ի կոնդակի իւրում գրեալ 'ի թուին Հայոց 1115 (1666). 'ի Յունվարի 23. քանզի ձիթենի ծառն այն, յորում պրկեալ ճաղկեցաւ Տէրն մեր Քրիստոս 'ի Ս. Հրեշտակապետի վանսն, ոչ ոք լուաւ, և ոչ ոք ետես յօրէն Աստուածայայտնութեան Տեառն մերոյ մինչեւ ցայսօր, եթէ հանեալ եղեւ 'ի պողոցն ձէթ իւղոյ, սակս նուազութեան պողոց ծառոյն։ Իսկ յայսմ ամի՝ այնքան արդիւնացեալ շնորհիւ Տեառն, մինչ զի ձգեալ ձէթն ոչ միայն 'ի նիւթ սրբալոյս Միւռոնի բաւականացաւ, այլ և 'ի խնդրոյ Կատինաց Հռոմայ Պապին շնորհ առաքեցաւ։ Եւ յետ այնորիկ բաշխէր ձրի զՄիւռոնն ժողովրդոցն Հայոց բնակելոց 'ի Տէրութեան Օսմանցւոց. և ձեռն արկեալ սկսաւ բազում շինութիւնս առնել յԵրուսաղէմ և 'ի վանս Յոպպէի։

Իբրեւ լուաւ Եղիազար թէ Յակոբ Կաթուղիկոս էառ հրովարտակ հակառակ ինքեան, եւ խափանեաց զգործս նորա, աճապարեալ գրեաց գիր աղաչանաց առ Եպարքոսն և առաքեաց 'ի բանակն Արքունի, և խնդրեաց 'ի նմանէ զի ըստ առաջին հրովարտակին իւրոյ, դարձեալ ինքն բաժանեսցէ ձրի զՄիւռոնն, եւ հատուցանել ամ ըստ ամէ զսահմանեալ հարկն. և ընդ նմին առաքեաց զտուրս յաջորդ տարւոյն։ Գրեցաւ հրովարտակ ըստ խնդրոյ նորին, բաժանել Եղիազարու զՄիւռոնն՝ և 'ի բաց կալ Յակոբայ